ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ՀԱՅԿԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 4-Ն

06 ապրիլի 2011թ. գ. Հայկավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի ԹԻՎ 35- Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի դրույթներով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավան համայնքի ավագանու 2010 թվականի դեկտեմբերի 23-ի՝«Հայկավան համայնքի 2011 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 35-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

Եկամտային մասում

«Պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ» 7421 հոդվածից նվազեցնել «600.0 հազար դրամ»
«Այլ գույքի վարձակալությունից եկամուտներ» 7415 հոդված՝ ավելացնել «10.0 հազար դրամ»

Ծախսային մասում

«Մասնագիտական ծառայություններ» 4241 հոդվածից նվազեցնել «600.0 հազար դրամ»
«Պահուստային միջոցներ» 4891 հոդվածից «216.0 հազար դրամ» հատկացնել «Տեղեկատվական ծառայություններ» 4234 հոդվածին:

Ավագանու անդամներ՝

1. Է. Ավետիսյան ---------- կողմ
2. Ս. Եդոյան ---------- կողմ
3. Ա. Մանուկյան---------- կողմ
4. Ա. Մարտիրոսյան ----------կողմ

Համայնքի ղեկավար՝ Ս. Մխոյան

06 ապրիլի 2011թ. գ. Հայկավան